

ԱԲԴԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

ԱԲԴԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ

1

Արդիայի տեսիլքը.-

Տէրը՝ Եհովան Եղովմի մասին սա՛ կը յայտարարէ.

Տէրոշմէն լուր մը լսեցինք,

Եւ ազգերուն դեսպան դրկուեցաւ՝ **Ըսելու.**

«Ոտքի ելէք, պատերազմի՝ կանգնինք անոր դէմ»:

2 Ահա՛ քեզ ազգերուն մէջ պզտիկ դարձուցի.

Դուն չափազանց պիտի արհամարհուիս:

3 Քու սիրտիդ հպարտութիւնը քեզ հրապուրեց,

Ո՛վ ժայռերու խորշերուն մէջ բնակող

Ու բարձր բնակարան ումեցող.

Դուն սիրտիդ մէջ կ'ըսես.

“Ո՞վ զիս գետին պիտի իշեցնէ՛:

4 Թէեւ արծիւի պէս բարձրանաս

Ու բոյնդ աստղերուն մէջ դնես,

Քեզ անկէ պիտի իշեցնեմ,- կը պատգամէ բՏէրը:-

5 Եթէ քեզի գողեր կամ գիշերային գային,

(հնչամ կործանեցար,)

Անոնք իրենց բաւարար ըլլալու չափ պիտի չգողնայի՞ն:

Եթէ քեզի **այգի** կթողներ գային,

Միթէ ճիռեր պիտի չթողուի՞ն:

6 Եսաւ ինչպէս խուզարկուեցաւ.

Անոր ծածուկ բաները ՞հետազօտուեցան:

7 Քու բոլոր դաշնակիցները քեզ մինչեւ սահմանը “ վտարեցին.

Քեզի հետ խաղաղութեամբ **ապրող** մարդիկը քեզ հրապուրեցին

Ու քեզի յաղթեցին.

Քու հացդ ուտողները քու տակդ որոգայթ դրին:

Անոր քով գինը չկայ:

8 «Ահա՛ այդ օրը,- կը պատգամէ բՏէրը,-

Եղովմէն իմաստունները պիտի բնաշնջեմ,

Ու Եսաւի լեռնէն՝ խելքը:

9 Քու գօրաւորներդ, ո՛վ թեման, պիտի զարհուրին,

Որպէսզի Եսաւի լեռնէն **ամէն** մարդ սպաննուելով կոտորուի»:

---

ս **Կամ** հեթանոսներուն

բ **Եբր.**՝ Եհովան

գ **Եբր.**՝ կործանողներ

դ **Եբր.**՝ հարցուփորձուեցան

ե **Կամ** հողամասէդ

գ **Եբր.**՝ հանճար

ԵԴՈՎՄԻ ՊԱՏԺՈՒԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- 10 «Քու եղբօրդ՝ Յակոբի եղած բռնութեան համար  
Ամօթը քեզ պիտի ծածկէ,  
Ու յալիտենապէս պիտի բնաշնջուիս:
- 11 Այն օրը երբ անոր դիմացը կայնած էիր,  
Այն օրը երբ օտարներ անոր գօրագունդերը գերեվարեցին,  
Օտարագգիներ անոր դուները մտան  
Ու երուսաղէմի վրայ վիճակ ձգեցին,  
Դուն ալ անոնցմէ մէկուն պէս էիր:
- 12 Պէտք չէր որ քու եղբօրդ օրը՝  
Անոր բաղէտին օրը դիմացէն նայէիր,  
Յուղայի որդիներուն համար ուրախանայիր՝  
Անոնց կործանումին օրը,  
Քու բերանդ բանայիր՝  
**Անոնց** տագնապին օրը.
- 13 Ո՞չ ալ իմ ժողովուրդիս դուռը մտնէիր՝  
Անոր ծախորդութեան օրը,  
Դուն ալ անոնց չարիքին վրայ նայէիր,  
Եւ անոր գոյքերուն վրայ ձեռք դնէիր  
Անոր ծախորդութեան օրը.
- 14 Ո՞չ ալ քառուղին կայնէիր՝  
Անոր ազատածները կոտորելու համար,  
Եւ անոր վերապրողները մատնէիր՝  
**Անոր** տագնապին օրը»:

ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ԴԱՏԷ ԱԶԳԵՐԸ

- 15 «Արդարեւ բոլոր ազգերուն վրայ հասնող Տէրոց օրը մօտ է.  
Քեզի հետ պիտի վարուին՝ ինչպէս որ դուն վարուեցար,  
Քու հասուցումդ գլուխդ պիտի վերադառնայ.
- 16 Որովհետեւ ինչպէս դուք իմ սուրբ լերանս վրայ խմեցիք,  
Բոլոր ազգերն ալ շարունակ պիտի խմեն.  
Պիտի խմեն, պիտի կլեն,  
Ու չեղածի պէս պիտի ըլլան»:

ԻՄՐԱՅԵԼԻ ՁԱՂԹԱՆԱԿԸ

<sup>Հ</sup> Կամ՝ հարստութիւնը յափշտակեցին

<sup>Ձ</sup> Եբը՝ օտարութեան

<sup>Պ</sup> Եբը՝ մեծցնէիր

<sup>Ժ</sup> Այսիցըն՝ գոյութիւն չունեցածի

## ԱԲԴԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՌՈՒԹԻՒՆԸ

- 17 «Բայց Սիոն լերան վրայ ազատում պիտի ըլլայ,  
Եւ ան սուրբ պիտի ըլլայ.  
Յակոբի տունը իր ստացուածքին պիտի տիրանայ:
- 18 Յակոբի տունը կրակ պիտի ըլլայ,  
Յովսէփի տունը՝ բոց,  
Իսկ Եսաւի տունը՝ խողան.  
Անոնց մէջ պիտի բոցավառեն,  
Զանոնց պիտի սպառեն,  
Ու Եսաւի տան մնացորդ մը պիտի չըլլայ,  
Որովհետեւ Տէրը խօսեցաւ:
- 19 Հարաւայինները Եսաւի լերան պիտի տիրանան,  
Եւ դաշտայինները՝ Փղշտացիններու երկրին.  
Անոնց Եփրեմի դաշտավայրին ու Սամարիայի դաշտավայրին պիտի տիրանան,  
Եւ Բենիամին Գաղաադի պիտի տիրանայ:
- 20 Իսրայէլի որդիններուն տարագիրները – այս զօրքը –  
Քանանացիններուն ունեցածին պիտի տիրանան՝ մինչեւ Սարեփիթա.  
Երուսաղէմի տարագիրները՝ որ Սեփարադի մէջ են,  
Հարաւային քաղաքներուն պիտի տիրանան:
- 21 Ազատարարներ Սիոն լեռը պիտի բարձրանան՝  
Եսաւի լեռը դատելու համար,  
Ու թագաւորութիւնը Տէրոց պիտի ըլլայ»: